ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ.
ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-111

Երբոր բացվին դռներն հուսո,
և մեր Երկրեն փախ տա ծմեռ...

Ն. Ռուսինյան

Հիմնաբառեր. *Կիլիկիայի իշխանապետություն, Կիլիկիայի թագավորություն, Հայաստան, համեմատական օբյեկտ, ընդհանրություններ, այլընտրանք*

Որպես պետության կենսագործունեության կարևորագույն բաղադրիչների միասնական համակարգ՝ Կիլիկյան Հայաստանի մոդելը դեռ սպասում է իր վերլուծողին ու հետազոտողին:

Կիլիկյան Հայաստանի գոյության երեքդարյա պատմությունը յուրօրինակ մանրակերտ է, որի արտաքին և ներքին միջավայրերի ուսումնասիրությունը, հատկապես տնտեսության կառավարման ու արտաքին աշխարհի հետ հաղորդակցման դիտանկյունից, կարող է վեր հանել չափազանց կարևոր ու արժեքավոր գաղափարներ, որոնք, երկրների կառավարման այսօրվա միտումների համատեքստում՝ համապատասխան ժամանակային շտկումներով, կարող են տեղայնացվել մերօրյա Հայաստանում՝ որպես հայոց պետականության կառավարման դրական ու պիտանի փորձ:

Արտաքին դիվանագիտությամբ ճկուն քաղաքականություն, ռազմաքաղաքական իրատեսական հայեցակարգ, ներքին ու արտաքին միջավայրերի համակեցության նոր մշակույթ, բարեփոխումների ծրագիր տնտեսության ու, մասնավորապես, առևտրի ոլորտում, ռազմավարական ու մարտավարական հաղթանակներ, և այդ ամենն այնպիսի երկրների հարևանությամբ, որոնք, մեղմ ասած, այնքան էլ ոգևորված չէին նոր պետության՝ Կիլիկիայի՝ ինչ-որ առումով անակնկալ ծնունդով: Վերջինս, կարծես թե, իր գոյությամբ սկսում էր խառնել տարածաշրջանի ակտիվ «խաղացողների խաղաքարտերը»: Հոդվածաշարում փորձ է արվել պարզաբանելու կիլիկյան Հայաստանի կենսագործունեությունը և հանրամատչելի կերպով պատասխանել դրանից բխող հարցերին՝ զուգահեռներ տանելով մերօրյա Հայաստանի հետ:

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Երկու տասնյակից ավել գիտական, վերլուծական հոդվածների և 2 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

Կիլիկիա. համընկնումների փնտրտուք

Որպես կործանված հայոց պետության այլընտրանք, նորաստեղծ պետություն և անկախ պետականություն՝ Կիլիկիայի հայոց իշխանապետության, ապա թագավորության[1] գոյության, ինչպես նաև զարգացման ու անկման պատմությունը կարող է ուսանելի լինել ու նաև պատասխան տալ մի շարք հուզող հարցերի, որոնք այսօր ծառացած են մեր պետության առաջ: Կիլիկիան, ասես, մի յուրօրինակ մանրակերտ է արդեն էականորեն սեղմված սահմաններով հայոց վերջին՝ Բագրատունյաց թագավորության. թագավորություն, որի սահմաններն այլևս ոչ թե 300 հազար, այլ ընդամենը 40 հազար քառակուսի կիլոմետր էին[2], սակայն ծովային ելքի պահպանմամբ և, իհարկե, անկախության որոշակի չափաբաժնով:

Այդ երանելի ժամանակաշրջանից մինչև XX դարի սկիզբ ձգվում է պետականության ինստիտուտի չգոյության ու այդ վերացական աշխարհում ապրող հայի 600-ամյա պատմությունը՝ որպես անորոշության ու փնտրտուքի տանջալի օրերի ծանր շղթա:

Մեր հոգեկերտվածքն այդ ժամանակահատվածում ձևախեղվեց, ու առաջացավ մինչ օրս արմատացած այն մտածմունքը, որ մեզ պատուհասած յուրաքանչյուր բացասական երևույթի հիմնական մեղավորը մենք չենք: Մեղավոր են բոլորը՝ սկսած չարակամ դրացիներից մինչև խորթացած «բարեկամներ», պետություններ ու իշխանություններ, այլադավաններ ու անաստվածներ, բոլոր-բոլորը, բայց ոչ մենք՝ հայերս:

Իսկ մե՞նք: Ի՞նչ ենք արել մենք, որ չկործանվեն մեր մեծ թագավորություններն ու ապա, որպես դրանց այլընտրանք, հիմնադրվածները, սովորե՞լ ենք ազնվորեն վերլուծել մեր սխալներն ու չկրկնել դրանք: Ի վերջո, ի՞նչ ենք մտորել ու փոխանցել արյունից արյուն, սերնդից սերունդ, հյուսվածքից ու բանահյուսվածքից դեպի նոր, նորացված կամ նորացվող հայի Տեսակ: Հետազոտե՞լ ենք, արդյոք, թե հողագործի կամ տնայնագործի քրտնածոր երգերից, նանիկ-խաղիկ օրորոցայիններից ու վտանգավոր հարմարվողականությունից անդին այդ երբվանից սկսեցինք ներքուստ վերակազմակերպվել՝ վերադասավորելով մեր հոգեկերտվածքային գերակայությունները: Ե՞րբ կրկին սկսեցինք զգալ ոչ միայն աշխատանքային, այլև մարտական բազկի ուժը, ե՞րբ սկսեցինք «ռազմի երգերի ձայնով քնենալ», ե՞րբ արթնացավ մեր մեջ պետականասեր ու պետականաստեղծ հայը: Արդյո՞ք արթնացումը գիտակցված էր, թե՞ պահի թելադրանքով, արդյո՞ք սիրում ենք ապրել մեր իսկ ձեռքերով կերտած պետության մեջ, թե՞ 600 տարին անդառնալիորեն մեզ տարել է օբյեկտիվորեն ձևավորված գաղթականի հոգեբանական բարդույթի կարծրացման անբնական ճանապարհով:

Սրանք հարցեր են, որոնց պատասխանները, մեզանից բացի, ոչ ոքի պետք չեն, իսկ մեզ անհրաժեշտ են օդ ու ջրի պես: Անցյալի սխալներից և նաև հաջողություններից դասեր քաղելը՝ թեկուզև ուշացած, այդուհանդերձ, պատվաբեր ու չափազանց անհրաժեշտ գործ է, ու հասկանալի է, որ, բացի մեզանից, ով էլ որ փորձի վերլուծել դրանք, վերլուծելու է իր «զանգակատնից» ու հետևապես՝ իրեն ձեռնտու տեսանկյունից: Ավելին, ազնիվ ու հաճախ նաև ցավալի սեփական եզրահանգումներ ձեռքի տակ ունենալը ինչ-որ առումով վտանգավոր է, քանի որ կարող է որպես զենք ծառայել բոլոր նրանց համար, ովքեր որևէ կերպ չեն նպաստել ու չեն նպաստելու մեր հզորացմանն ու զարգացմանը՝ որպես անկախ պետություն ու տարածաշրջանային «խաղացող»:

Չհավակնելով պատմական որևէ խոր վերլուծական մտավարժանքի՝ կարծում ենք՝ նպատակահարմար է խոսել Կիլիկիայի հայոց թագավորության ստեղծման ու ձևավորման սկզբունքների, նրա զարգացման ու անկման, այդ ժամանակաշրջանի հանդեպ մեր այսօրվա ընկալման, ներկա ժամանակահատվածում նրա կատարելացման փորձերի միտման ակունքի ու, ընդհանրապես, Կիլիկիա երևույթի մասին՝ փորձելով դիտարկել այն հնարավոր եզրերը կամ առկա նմանությունները, որոնք, որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, բայց, այդուհանդերձ,

[1] Ս. Բոռնազյան, Կիլիկիայի հայկական պետությունը. «Հայ ժողովրդի պատմություն», հտ. III, Երևան, 1976, էջ 695-697:
[2] Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 5, Երևան, 1979, էջ 407:

կարող են հատուկ լինել այսօրվա Հայաստանին ու այնօրվա Կիլիկիային:

Ինչն է ընդհանուր, ընդօրինակելի, ուսուցողական ու արժանի վերլուծության՝ մեր օրերում տեղայնացման ու կիրառման առումներով: Ինչպիսին է Կիլիկիայի թագավորության մասին մեր այսօրվա հոգեկերտվածքային ընկալումը, և ինչո՞ւ է հենց այդ ժամանակահատվածը մեր մտապատկերում դաջվել որպես հայոց պատմության «ոսկե միջին» ժամանակաշրջան:

Տեսիլք և իրականություն

Կիլիկյան թագավորությունը մեր հոգեկերտվածքի կարծրատիպային անկյունից վեր է հառնում արևմտյան քաղաքակրթության, մշակույթի, կենցաղի և տնտեսության միախառնուրդ պետության պատկերով: Պետություն, որն առաջնորդվել է բացառապես Արևմուտքից առաջադրվող խաղի կանոններով, և անգամ թագավորներից ոմանք հենց Արևմուտքի ներկայացուցիչներ են եղել: Սա, իհարկե, շրջանառվող տեսակետներից մեկն է: Մինչդեռ իրականում Կիլիկիայի թագավորության հիմնական շարժիչ ուժը ոչ թե արևմտյան կողմնորոշումն էր, այլ արևմտյան առաջադեմ գաղափարների ու իրողությունների հաջողված ու արհեստավարժ համակցությունն արդեն իսկ ժառանգված մերձավոր ու միջինարևելյան իրականությանը, որին տրամաբանորեն զուգակցվեց Արևելքի՝ այդ ժամանակահատվածի երևելի տիրակալների ու նրանց պետությունների հետ փոխշահավետ համագործակցության ռազմավարությունը՝ դա դարձնելով պետական քաղաքականություն, որի արդյունքում թե՛ ռազմական, թե՛ տնտեսական հարաբերությունները դարձան էլ ավելի արժանավայել, ճկուն ու բազմավեկտոր:

Կիլիկյան ժամանակաշրջանը հաճախ զուգորդվում է նաև ստեղծագործ, կերտող, անկախության համար պայքարող, արևմտյան հոգևոր ու մշակութային արժեքներն արևելյանի հետ շաղախող միակուռ համակարգի հետ՝ համեմված «Երկիր դրախտավայրի» ծովային բաղադրիչով:

Մի խոսքով, մեր մտահորիզոնում Կիլիկյան Հայաստանը շարունակում է մնալ որպես եդեմական ու տեսիլքային երևույթ՝ երազանքի կայուն մասնաբաժնով, որն ընդամենը մեկ դար առաջ «ծածկվեց ծանր ու անթափանց վարագույրով», որի վրա արտացոլված էին արդեն կորսված թագավորության տարածքներում ապրող հայերի՝ XIX դարավերջին սկիզբ առած ցեղասպանության և դրախտավայր երկրի ամայացման ու «սառը ձմեռվա» խստաշունչ պատկերները:

Այսօր, հատկապես Կիլիկիայի առումով, հստակ նպատակով ու միտումով իջեցված «ծանր վարագույրի» ժամանակաշրջանը, կարծես թե, պետք է անցած լիներ, ու հայ միտքն արդեն մերօրյա Հայաստանում զարթոնք պիտի ապրեր՝ և ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքագիտական, դիվանագիտական, տնտեսագիտական ու այլ ուղղություններում հիմնարար վերլուծությունների, հետազոտությունների միջոցով օրակարգ բերելով Կիլիկիայի պետական կառավարման, միջպետական քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային հարաբերությունների ստեղծման և կարգավորման հարուստ ու ուսանելի փորձը: Սակայն, ցավալի է, բայց փաստ, որ այդպես չէ, քանի որ կիլիկյան ժամանակաշրջանն առավելապես շարունակում է մնալ մեր տեսիլքային և ոչ գործնական-կիրառելի մտահորիզոնում: Ու այդ առումով, ըստ էության, «անթափանց վարագույրը» դեռ առկա է, և մասնագիտական տեսանկյունից, վերլուծական ու հետազոտական անհասկանալի «ձմեռը», ցավոք, դեռ «փախ տալու» միտումներ ցույց չի տալիս:

Եվ այսպես…

Եթե հաշվում ենք դարաշրջանով, ապա ընդամենը մեր պատմական անցյալի մի փոքր հատվածում է տեղավորվում Կիլիկիայի ֆենոմենը, որը շարունակվել է ընդամենը երեք ու կես դար[3]: Այդ առումով, զուգահեռներն իհարկե չեն հատվում ու շարժվում են իրարից անկախ: Զուգահեռներ չկան նաև մեկ այլ կարևոր հայեցակետում. Կիկլիկիան ծովային պետություն էր և հետևաբար՝ բոլորովին այլ արտաքին աշխարհընկալում ուներ: Չանտեսելով մեկնակետային այս տարբերությունը՝ փորձենք Կիլիկիայի թագավորության ժամանակահատվածը դիտարկել որպես.

[3] Ա. Մելքոնյան, Է. Դանիելյան, Գ. Հարությունյան, Հ. Մուրադյան, «Հայոց պատմություն» դասագիրք. 7-րդ դաս., Երևան, «Զանգակ» հրատ., 2014, էջ 114-120:



ՆԿԱՐ 1

Կիլիկիայի հայկական պետությունը

ա) այլընտրանք պետություն կառուցելու փորձ՝ ի լրումն կամ ի շարունակություն կորսված պատմական թագավորության, իբրև ազատատենչության խորհրդանիշ,

բ) իրապես բարեփոխումների ակտիվ ժամանակաշրջան՝ պետականաշինության, միջազգային հարաբերություններում կամուրջներ կառուցելու և ոչ այրելու, «և-և»-ի, այլ ոչ թե «կամ-կամ»-ի սկզբունքով հարաբերվելու, տնտեսության ու առևտրի ոլորտներում առաջընթացի տեսանկյունից:

Ի սկզբանե դիտարկումները, կարծես թե, մեզ տանում են դեպի հոգեբանական և սոցիալ-քաղաքական տիրույթ, և տնտեսական վերլուծական միտքն ասես նահանջում է: Բայց սա ընդամենը՝ առաջին հայացքից, քանի որ ներկայում յուրաքանչյուր (կայուն, անցումային, նախաանցումային) տնտեսության զարգացման գործընթաց ներառում է հաղորդակցման և հարաբերությունների էապես նոր մոդելներ՝ հագեցած նոր կանոնների փաթեթով, որի դեպքում թե՛ հոգեբանական և թե՛ սոցիալ-քաղաքական գործոնները դառնում են միջավայրի վերլուծության էապես կարևոր բաղադրիչներ:

Վերլուծությունների «տաբու»

Առաջին հանրապետության գոյության կարճ ժամանակահատվածում պատմական ու, առավել ևս, տնտեսագիտական վերլուծությունների ժամանակ չկար, և, թերևս, օբյեկտիվորեն ընկալելի է, որ տվյալ շրջանում գիտական միտքը չի անդրադարձել Կիլիկիայի հայկական պետության առանձնահատկություններին: Այլ էր խնդիրը նորաստեղծ Խորհրդային Հայաստանի պարագայում, երբ գաղափարական ու գիտական աշխատանքի հանդեպ դանդաղ, սակայն կայուն կերպով ձևավորվում էր պետական հոգածություն: Այս համատեքստում, վերլուծելով Խորհրդային Հայաստանի գիտական մտքի զարգացման ուղղությունը, ակներև է դառնում, որ Կիլիկիայի հայոց թագավորության պատմա-

կան կամ տնտեսական համապարփակ վերլուծության անհրաժեշտությունը միտումնավոր կերպով ստորադասվել է դրան նախորդող հայոց թագավորությունների մասին պատմական կամ մեկ տեսակի վերլուծությունների ու հետազոտությունների ուղղությանը:

Այսպիսի մոտեցումը, թերևս, պետք է դիտարկել՝ ելնելով գաղափարական դրդապատճառներից: Կարծում ենք՝ գերակա դրդապատճառն այն էր, որ նոր, այլընտրանքային թագավորության ստեղծումը՝ այն էլ ոչ արքունական արյամբ օժտված իշխանի կողմից[4], պատմական անհրաժեշտության ձևակերպումից զատ, կարող էր նաև սերմանել կառուցակարգի ընտրության մտածողության այնպիսի «հունդեր», որոնք կարող էին պարունակել պետության կերտման ընդգծված գաղափար, ինչը հստակ կերպով մերժելի էր կոմունիզմի ուտոպիայով տառապող իշխող այլադեմ վերնախավի համար: Հետևապես՝ կոմունիզմի գաղափարական հայրերի համար ավելի անվնաս ու ընդունելի էր Մեծ Հայքի ու «ծովից ծով» Հայաստանի տեսիլքային մտավարժանքների գիտական ուղղության ակտիվացումը՝ ի հակադրություն որոշակի համընկնումներ ունեցող այլընտրանք պետության ստեղծման ու կենսագործունեության ուսումնասիրության: Վերջինս կարող էր հանգեցնել ազգային ոգու ու վարքագծի անտեսանելի, բայց խորքային «տեկտոնական» շարժերի, նպաստել ազատատենչ մտքի արթնացմանը, ինչը բոլշևիկյան գաղափարախոսության համար կարող էլ լինել չափազանց անպատեհ ու վտանգավոր, քանի որ ընդհանրապես որևէ աղերս չուներ կոմունիզմի գաղափարի ակտիվ ներարկման գործընթացի հետ:

Այսինքն, կոմունիստական գաղափարախոսության տեսանկյունից, անհատի ազգային ինքնագիտակցմանը միտված ամեն մի «վրձնահարված» անթույլատրելի էր համարվում ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կամ մշակութային հայեցակարգերում: Դրանց դեմ էր աշխատում խորհրդային գաղափարախոսական ամբողջ մեքենան, ու այդ ապազգային քաղաքականությունը ժառանգաբար իրենց օրակարգ ներառեցին նաև հայազգի բոլշևիկ գաղափարախոսները և կոմունիստական վերնախավը, քանի որ, ինչպես նշեցինք, «ծովից ծովի» նյութականացումն իր բնույթով արդեն իսկ անչափելի էր ու գործնականում դժվարընկալելի, հետևաբար՝ անվնաս, իսկ Կիլիկիան՝ տարածաչափական ընկալման համատեքստում, ինչ-որ առումով կարող էր լինել համադրելի և նյութականացվող: Հենց այս դիտանկյունից էր Կիլիկիային առնչվող յուրաքանչյուր գործընթաց վտանգավոր թվում բոլշևիկյան գաղափարախոսների համար, որոնք միապետությունը վերափոխել էին միակուսակցականության և այլևս չէին ձգտում դիտարկել ինչ-որ օրինակելի կամ դրական փորձեր՝ ոչ մի առումով ու ոչ մի ոլորտում, լիներ դա ռազմաքաղաքական, միջազգային, տնտեսական, մշակութային թե մեկ այլ հարաբերություններում:

Այսպիսով՝ խորհրդային չափորոշիչների մամլիչով հսկվող պատմագիտական մեծ շիլաշփոթի և խմբագրումների ժամանակահատվածում Կիլիկիայի պետականակերտման ուսումնասիրության ուղղությունը միտումնավոր կերպով մղվել էր տեսիլքային անվնաս տիրույթ ու դարսվել ներազգային զեղում-խորհրդանիշների անօգտագործելի դարակաշարում:

Թերևս, այս համատեքստում է նաև հասկանալի խորհրդային կառավարիչների ակտիվ դերակատարումն ու ստվերային քաջալերումը Խորհրդային Հայաստանի սահմաններում գործունեություն ծավալող հայ առաքելական հոգևորականության դասին՝ ստեղծելու խոր հակադրություն էջմիածնի Մայր աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո աթոռի միջև[5]: Այս ամենը շարունակվեց շուրջ 70 տարի, և միայն անկախության ճամփան բռնած Հայաստանի իշխանությունների՝ երկու եկեղեցական կառույցների հարաբերություններին չմիջամտելու քաղաքականության արդյունքում էր, որ եկավ սառը հակամարտությանը վերջ դնելու պատմական պահը, որը վերջնարդյունքում հանգեցրեց նոր իրողության, երբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը դարձավ Մայր Աթոռի տեղապահ և ապա՝ Ամենայն հայոց Հայրապետ:

Այդուհանդերձ, անկախ նրանից, որ կո-

[4] encyclopedia.am/pages.php.hid 1307
[5] https://arar.sci.am/dlibra/docmetadata?showContent=true&id=242126

մունիստական գաղափարական մամլիչն այլևս անցյալում է, ու արդեն երեք տասնամյակ հայ գիտական մտքի թռիչքի ուղիները չի սահմանափակում որևէ թերուս կամ ուսյալ գաղափարախոս, պետք է արձանագրենք, որ կիլիկյան ժամանակաշրջանի համալիր ուսումնասիրության փորձեր այդպես էլ չեն արվում: Իսկ այն, ինչ արվում է, չթերագնահատելով դրա կարևորությունն ու արժեքը, սահմանափակվում է դասագրքային ու պատմագիտական նեղ միջակայքում:

Կիլիկյան թագավորության ժամանակաշրջանը, որը հայոց մեծ թագավորության վերջին մայրաքաղաք Անիի կործանման պատճառով իր վրա էր կրում կորստի չսպիացող վերքը, կարելի է համարել նաև նոր պետականության ստեղծման դրական փորձի և հետևապես՝ նոր մտածելակերպի ծննդյան շրջափուլ, որի շնորհիվ վերստին ապացուցվում է, որ մեծ ու աղետալի կորուստների պարագայում անգամ նոր մտքի ու դրա արդյունավետ իրացման թեզը գոյություն ունենալու ու կյանքի կոչվելու հիմք ունի:

Վերացական տեսիլքները երբեմն դառնում են «միս ու արյուն»: Հայկական իրողությունների շղթայում տեսիլքի այսպիսի վերափոխում ու նյութականացում տեղի ունեցավ հայության մեծագույն ողբերգության՝ Մեծ եղեռնի տարիներին, երբ դարերով պետականության գիտակցումը կորցրած, պետություն չընկալող, նպատակային ցեղասպանության տարվող, անմարդկային տառապանքներ կրող մազապուրծ ազգի մի փոքրիկ հայրենապահ հատված հասավ Լիբանանի ու Սիրիայի ծովափնյա շրջաններ, որոնք այնքան նման էին բաղձալի երկիր Կիլիկիային և շնչում էին նրանով...

Ընտրության տրամաբանությունը

Քաղաքական, մշակութային ու հոգևոր ժառանգության առումով, այդ ժամանակաշրջանն անհավանական կերպով բեղմնավոր էր: Մխիթար Հերացի, Ներսես Շնորհալի, Սմբատ Զորավար, Սարգիս Պիծակ, Թորոս Ռոսլին[6], իշխանական ու թագավորական անուններ, որոնք, ի վերջո, ընդունվեցին ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև դարձան Արևմուտքի մշակութային ժառանգության պահոցի մուտքի այցեքարտ:

Երևելի անունների շարքը շարունակելի է, և նրանց շունչն ու ոգին են հիմնականում նյութականացվել ու դարձել յուրօրինակ լիցքավորման աղբյուր XIX և XX դարերի մեր ստեղծագործ, ազատատենչ և նաև անկախ մտքի ձևավորման համար: Նրանց շնորհիվ է ձևավորվել մերօրյա ազգային, մշակութային, հոգևոր և/կամ ռազմաքաղաքական ժառանգության ու հոգեկերտվածքի պահպանման դասագիրքը՝ ի փառս արցախյան գոյամարտի ու վերածնվող ազգապահպան գաղափարախոսության: Այս ներկապնակում ազատ է տնտեսագիտական բաղադրիչի հարթակը: Առկա չեն արտաքին ու ներքին միջավայրերի ընդհանուր վերլուծական հետազոտություններ ու հոդվածներ, և հետևաբար՝ չեն կարող գործնական քննարկումների փուլ մտնել դրանց կիրառելիության ու արժևորման անհրաժեշտ գործիքակազմերի առաջարկները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ հայոց պատմության որևէ ժամանակաշրջանի ամբողջական միջավայրերի (արտաքին, ներքին) վերլուծությունները, այսպես թե այնպես, չափազանց սակավաթիվ են, իսկ որոշ դեպքերում՝ հպանցիկ ու հատվածային: Այս առումով, իրոք, մասնագիտական գրականությունը բավարար չէ, իսկ պատմական որոշ ժամանակահատվածների վերաբերյալ՝ բացակայում է հիմնովին: Այդուհանդերձ, գոնե Կիլիկիայի պարագայում հենց պետության կառավարման ուսումնասիրության փորձը կարող է դառնալ բավական արժեքավոր՝ ըստ էության կատարելով լաբորատոր փորձադաշտի դեր, ներառելով դրական ու բացասական փորձերի ողջ ներկապնակը՝ դրականի տեղայնացման, բացասականի խմբագրման ու այլևս չկրկնելու սկզբունքով:

Այլապես, անընդհատ խոսելով հին և չնորացվող արժեքների մասին, որևէ անկեղծ եզրահանգում չկատարելով մեր անհաջողությունների պատճառների վերաբերյալ, բազմակողմանիորեն չվերլուծելով հաղթական պատմությունները, ծանր սխալները, երբևէ չենք կարող թոթափել

[6] https://uniarm.wordpress.com/կիլիկիայի հայոց թագավորություն/

հին, սակայն անհիրատես, բարդույթավորված ազգ լինելու ավելորդ ու անպիտան բեռը, որը խաթարող ու քայքայիչ դերակատարում ունի այլոց հետ հաղորդակցման ու նորացվող կառուցներում ինտեգրման գործընթացներում: Հակառակ պարագայում, ուղղակի ստիպված ենք լինելու արձանագրել, որ մենք, անկախ մեր ցանկությունից, ժամանակի ու տարածության մեջ պահպանելով մեր նպատակները, չենք կարողանալու արդյունավետ կերպով իրականացնել նախանշված քայլերը ցանկալի ու հնարավոր նպատակներին հասնելու ճանապարհին:

Տնտեսագիտության մեջ միջավայրերի ախտորոշման և դրանց կանխատեսելիության ու բարդության մատրիցի կազմման ու հետագա վերլուծության հիմքը նպատակի ընտրության և նպատակների ծառի ճիշտ կառուցումն է: Ընդ որում, նպատակների տարանջատումը, դրանց իրականացման տրամաբանությունը չափազանց կարևոր պայման են, քանի որ չի կարելի գոյատևման համար անհրաժեշտ նպատակները դիտարկել ցանկալի ու հնարավոր նպատակների փնջերում: Իրենց բնույթով սրանք միմյանց չբացասող և տրամաբանական-շարունակական շղթայում գտնվող նպատակներ են՝ որևէ արդյունքի հասնելու համար նպատակամղված քայլերի հստակ հաջորդականությամբ: Գլխավոր նպատակը գոյության և կենսագործունեության համար անհրաժեշտ դաշտի առկայությունն է, որից հետո միայն կարող է ձևավորվել դրա զարգացման համար մեկ աստիճան բարձր մեկ այլ նպատակ՝ ցանկալին, ապա միայն ցանկալիի տեսլականը՝ հնարավորը:

Կառավարման տեսանկյունից, յուրաքանչյուր միավորի, իսկ այս դեպքում՝ պետության արտաքին միջավայրի (տարածաշրջան, անմիջական հարևան, ապա նաև գործընկեր, համագործակցող կամ հակառակորդ երկրներ) վերլուծությամբ և հաջորդիվ՝ ներքին ու արտաքին ներազդող խմբերի դասակարգմամբ կարելի է վեր հանել ուժեղ և թույլ կողմերը, տեսնել վտանգները, որոնք կարող են և ունակ են իրենց մեջ ունենալ նոր հնարավորությունների բանալիներ:

Նման վերլուծություն կատարելու համար ցանկալի է հենակետի կամ համեմատության օբյեկտի առկայությունը: Ելնելով նման օբյեկտիվ անհրաժեշտությունից՝ մեր ուշադրությունը սևեռել ենք Կիլիկիայի թագավորության վրա:

Կիլիկիան՝ որպես համեմատական վերլուծության օբյեկտ

Համեմատական օբյեկտի ընտրությունը ոչ միայն ի զորու է որոշիչ դերակատարում ունենալու վերլուծական աշխատանքում, այլև շատ դեպքերում յուրօրինակ այցեքարտ է՝ իրականացվող աշխատանքի հավակնությունների և ուղղվածության առումով: Այն չպետք է ստորադասի ուսումնասիրվող դաշտը կամ պետությունը՝ որպես այդպիսին, այլ պետք է իր մեջ կրի անհրաժեշտ զուգահեռներ արտաքին միջավայրի վրա ներազդող հիմնական անհրաժեշտ գործոնների ու բաղադրիչների տեսանկյունից՝ իհարկե, համահունչ լինելով ուսումնասիրման օբյեկտի ներքին միջավայրին, ավանդույթներին ու մշակութային բաղադրիչներին: Այսինքն՝ համեմատականներ անցկացնելու և ընդհանուր դիտարկման համար անհրաժեշտ է բաղադրիչների որոշակի փաթեթի առկայություն, ինչը Կիլիկիայի պարագայում ոչ ամբողջապես, սակայն առկա է (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ում, առնվազն ըստ 4 կարևոր բաղադրիչների, տեսանելի է նմանություն: Մասնավորապես՝ տարածքի և բնակչության դեպքում դրանք բավական մոտ են, իսկ կրոնի և տարածաշրջանի պարագայում՝ ամբողջապես համընկնում են: Իհարկե, ըստ տարածաշրջանի բաղադրիչի, Կիլիկիայի դեպքում 500 կմ ծովային սահմանը շատ կարևոր գործոն է և լոգիստիկայի առումով՝ էական հանգամանք, սակայն ժամանակակից տրանսպորտային հաղորդակցությունը 7-8 դար առաջվանի հետ համեմատելի չէ: Ներկայիս Հայաստանի պարագայում, հատկապես հաղորդակցման ուղիների առկայության համատեքստում, անկախ այժմյան դժվարություններից, անհրաժեշտ ենք համարում որպես հիմք ընդունել տարածաշրջանային խաչմերուկ համարվող երկրի սկզբունքը, որի դեպքում ջրային տարբեր ուղիների մեկնակետերն անմիջական շփման մեջ են մտնում խաչմերուկի լոգիստիկ վերջնակետերի հետ: Սակայն,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Համեմատական բաղադրիչների որոշիչ խումբը

պետք է նաև արձանագրենք, որ հատկապես հարևան երկրների առումով, տարածաշրջանի պատկերն այնքան էլ չի փոխվել, հետևաբար՝ տվյալ բաղադրիչի մի շարք գործոններ մնում են անփոփոխ:

Կիլիկիայի կառավարման դրական փորձի ուսումնասիրությանը զուգահեռ, անդրադառնալու ենք նաև տվյալ ժամանակահատվածում պետության կառավարիչների գործած ճակատագրական սխալներին՝ վեր հանելով դրանք: Հետևաբար՝ պետականաշինության (արտաքին քաղաքականություն, ռազմական բարեփոխումներ, մշակույթ, տնտեսություն, առևտուր) խնդիրներին զուգահեռ, դիտարկելու ենք նաև պետականության կորստի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:

(Շարունակելի)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Բոռնազյան, Կիլիկիայի հայկական պետությունը. «Հայ ժողովրդի պատմություն», հտ. III, 744 էջ, Երևան, 1976:
2. Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 5, 720 էջ, Երևան, 1979:
3. Ա. Մելքոնյան, Է. Դանիելյան, Գ. Հարությունյան, Հ. Մուրադյան, «Հայոց պատմություն» դասագիրք. 7-րդ դաս., 228 էջ, Երևան, «Զանգակ» հրատ., 2014:
4. encyclopedia.am/pages.php.hid 1307
5. https://arar.sci.am/dlibra/docmetadata?showContent=true&id=242126
6. https://uniarm.wordpress.com/կիլիկիայի հայոց թագավորություն/

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

УРОКИ КИЛИКИИ: ЧАСТЬ ПЕРВАЯ

Модель Киликийской Армении, как единой системы важнейших составляющих жизнедеятельности государства, еще ждет своего аналитика и исследователя. История трехвековой жизнедеятельности Киликийской Армении является уникальным примером для изучения ее внешней и внутренней среды, особенно с точки зрения ведения хозяйства и связей с внешним миром, что может возродить очень важные и ценные идеи, которые, в контексте сегодняшних тенденций по управлению государством, а также в соответствии с современными корректировками, могут быть локализованы в Армении, как положительный и подходящий опыт.

Гибкая внешнедипломатическая политика и реалистичная военно-политическая концепция; новая культура сосуществования внутренней и внешней среды; программа реформ в экономике и, особенно в области торговли; стратегические и тактические победы - все это, при наличии таких соседних стран, которые, мягко говоря, были не в восторге от неожиданного появления государства, которое, похоже с его создания, начало смешивать активные «игровые карты» региональных игроков. В статье предпринята попытка общедоступно разъяснить логику подобных действий Киликийской Армении и вытекающих из них вопросов, стремясь остаться в пределах наиболее видимых общих черт с современной Армением.

Ключевые слова: *Киликийское княжество, Киликийское царство, Армения, сравнительный объект, общие положения, альтернатива*

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

VISION OF ARMENIAN SOCIETY

LESSONS OF CILICIA: PART ONE

The model of Cilician Armenia, as a single system of the most important components of the life of the state, is still waiting for its analyst and researcher. The history of the three-century life of Cilician Armenia is a unique example and the study of its external and internal environment, especially in terms of economic management and relations with the outside world, can revive very important and valuable ideas, which are in the context of today's trends in state governance. In addition, with some contemporary adjustments, it can be localized in Armenia, as a positive and suitable experience.

A flexible foreign diplomatic policy and a realistic military-political concept, a new culture of coexistence of the internal and external environment, a program of reforms in the economy and especially in the field of trade, strategic and tactical victories - all this, in the presence of such neighboring countries, which, to put it mildly, were not enthusiastic about the unexpected emergence of the state With its creation, Cilicia seemed to begin mixing the active "game cards" of regional players. The paper attempts to publicly explain the logic of such actions of Cilician Armenia and the issues arising from themtrying to remain within the most visible common features with modern Armenia.

Key words: *Principality of Cilicia, Kingdom of Cilicia, Armenia, comparative object, general provisions, alternative*